ԼԻԶԱ ՔԱՐԻՄՅԱՆ

ԶԵՆՈՆ ԿԱՅՍԵՐ «ՀԵՆՈՏԻԿՈՆԸ»

Հետքաղկեդոնական առաջին տասնամյակների եկեղեցական պատմությունը բնութագրվում է աստվածաբանական-դավանաբանական բուռն ու անհաշտ վիճաբանություններով: Դա, միաժամանակ, նշանակում է նաև, որ վիճաբանության կողմերը կազմող դավանաբանական ուղղություններից յուրաքանչյուրն անցնում է զարգացման իր ուրույն և բարդ ճանապարհը: Ներեկեղեցական հարաբերությունների զարգացման պատմական փուլերից մեկն էլ կապված է Զենոն կայսեր «Հենոտիկոնի» հետ:

V դարի 60-70-ական թվականներին բյուզանդական եկեղեցու դեմ հակաքաղկեդոնական հոսանքների անհաշտ պայքարը կայսրության քաղաքական և հոգևոր վերնախավին հարկադրեց վճռական քայլերի դիմել ներեկեղեցական հարաբերությունները կարգավորելու ուղղությամբ: Այդ շարժման գլուխ կանգնեցին Զենոն կայսրը և Կ. Պոլսի Ակակիոս պատրիարքը լիովին համոզված լինելով այն բանում, որ կայսրության ներքին անդորրը պահպանելու համար անհրաժեշտ է վերջ տալ եկեղեցական պառակտումներին: Նրանք դավանաբանական փոխզիջումների հենքի վրա առաջադրեցին և փորձեցին ծավալել միարարական քաղաքականություն, որը, դուրս գալով կայսերական շրջանակներից, համաքրիստոնեական նշանակություն ձեռք բերեց: Հատկանշականն այստեղ այն է, որ ինչպես կայսրը, այնպես էլ Կ. Պոլսի պատրիարքը ձգտում էին միարարության հասնել ոչ թե հարկադրանքների, այլ քննարկումների քաղաքականության հիման վրա: Ընդ որում, երկուսն էլ քաջ գիտակցում էին, որ իրենց նպատակների իրականացումն անխուսափելիորեն սրելու էր հակասությունները Հռոմի աթոռի հետ: Եվ, քանի որ վանդալների կողմից շրջապատված Հռոմը կտրված էր արտաքին աշխարհից, Բյուզանդական կայսրության քաղաքական ու հոգևոր ղեկավարները վճռականորեն ձեռնամուխ եղան մտահղացված ծրագրի իրականացմանը:

Մեզ հասած պատմաեկեղեցական վավերագրերը թույլ են տալիս մատնանշել նոր քաղաքականության ևս մեկ միտում: Խոսքը վերաբերում է այն բանին, որ Զենոն կայսրը և Ակակիոս պատրիարքը նոր դավանագիրը նախապատրաստեցին ալեքսանդրացի հակաքաղկեդոնական եպիսկոպոս Պետրոս Մոնգի հետ, որն էլ դարձավ իրենց որդեգրած քաղաքականության դավանաբանական սահմանումը: Այդպես 482 թ. հրապարակ իջավ դավանաբանական

բնույթի մի նոր հրովարտակ, որը պատմությանը հայտնի է Զենոնի «Հենոտիկոն» անվամբ:

Պատմագիտական և եկեղեցաբանական գրականության ընդհանրական կարծիքի համաձայն Զենոն կայսեր «Հենոտիկոնը» համարվում է փոխզիջումային դավանագիր: Այդ առիթով Ու. Ուոլքերը գրում է. «482 թ. Զենոն կայսրը հրապարակեց հայտնի Հենոտիկոնը, որը դատապարտում էր Եվտիքեսին: Զենոնը կանոնական համարեց Կյուրեղի քրիստոսաբանությունը, սակայն չպատասխանեց այն հարցին, թե Լևոնի տոմարի երկու բնությունների վարդապետությունն ու քաղկեդոնական սահմանումը արդյո՞ք համատեղելի էին դրա հետ. նա հույս ուներ, որ այդ քաղաքականությամբ կարող է հաշտեցնել այդ երկու հատվածները»[1]: Սակայն հիմնահարցի նկատմամբ նման մոտեցումը բավարար հիմնավորված չէ, քանի որ քաղկեդոնական աստվածաբանության նկատմամբ իր վերաբերմունքով «Հենոտիկոնը» բավականին արմատական էր:

Կաթոլիկ ականավոր աստվածաբան և եկեղեցագետ Դյուշենը, արձանագրելով դավանագրի կառուցվածքային առանձնահատկությունը, մատնանշում է, որ «Միության հրամանագիրը կամ Հենոտիկոնը շարադրված է նամակի ձևով, որը Զենոնի կողմից հասցեագրված էր Ալեքսանդրիայի, Եգիպտոսի, Լիբիայի և Պենտապոլսի եպիսկոպոսներին, հոգևորականներին, վանականներին, ինչպես նաև հավատացյալներին: Այստեղ նա առաջ է քաշում Նիկեայի և Կ. Պոլսի հավատամքների վրա հենված իր հավատքը»[2]: Պ. Մեյենդորֆը ավելացնում է, որ «Զենոնի Հենոտիկոնը ... հասցեագրված էր Ալեքսանդրիայի եկեղեցուն, և նրանում որևէ եպիսկոպոսի անվան հիշատակում չկա: Կայսրը միության կոչ էր անում և հայտարարում, որ կայսրության բոլոր եկեղեցիները չպետք է այլ հավատք ընդունեն, բացի Նիկեայի և Կ. Պոլսի հավատամքներից: Կայսրը բանադրում է Եվտիքեսին, ընդունում Կյուրեղի 12 նզովքները, որոնց հիման վրա էլ հրապարակում է քրիստոսաբանական հավատքի խոստովանություն, որը խուսափում էր «բնություն», «հիպոստասիս» (էություն Լ. Ք.) և «պրոսոպոն» (դեմք Լ. Ք.) եզրերն օգտագործելուց»[3]:

---

[1] Տես, **A history of the Christian Church** (ed. by Wilsston Walker). New York, 1985, p. 174. Ըստ էության նույնն է նաև Արևմտյան և Արևելյան աստվածաբանության հանրագումարային տեսակետը: **Карташев А. В.** Вселенские соборы. М., 1994, с. 244-245; Поснов М. Э. История христианской Церкви (до разделения Церквей - 1054 г.) Брюссель, 1964, с. 405-407; Болотов В. В. Лекции по истории древней Церкви. Т. 4, М., 1994, с. 341; **Philip Schaff.** History of the Christian Church, V. 3, Massachusets, 1996, p. 396; **Kelli J. N. D.** Early cristian creeds, Singapore, 1993, p. 123 և այլն:

[2] **Abbe Duchesne.** The Early history of the Church. V. 3, London, 1950, p. 348.

[3] **Meyendorff P.** Imperial unity and christian divisions. New York, 1989, p. 198.

Այդ ամենը վկայում են, որ «Հենոտիկոնն» իրենից ներկայացրել է բավականին բարդ և, մեր համոզմամբ, չափազանց կարևոր դավանական փաստաթուղթ, որը, ժամանակաշրջանի հավատքային այլ փաստաթղթերի նման, եկեղեցական տարբեր ուղղությունների կողմից տարբեր կերպ է արժեքավորվել: Հաշվի առնելով այն, որ «Հենոտիկոնը» ամենից առաջ ուղղված է եղել Ալեքսանդրիայի, Լիբիայի և Պենտապոլսի եպիսկոպոսներին, հոգևոր դասին և շարքային հավատացյալներին, պետք է ենթադրել, որ այն ամենից առաջ ուղղված էր հակաքաղկեդոնական արմատական թևին: Եվ ամենևին էլ պատահական չէ, որ «Հենոտիկոնում» Զենոն կայսրը հռչակում էր, թե պաշտպանում է Նիկեայի 325 թ. և Կ. Պոլսի 381 թ. տիեզերաժողովների հաստատած Հավատո հանգանակը և Քրիստոսի բնությունների վերաբերյալ ուղղադավան այն վարդապետությունը, որը Եփեսոսում հաստատվել է ընդդեմ Նեստորի և նեստորականության: Այդ կապակցությամբ կայսրը հռչակում է. «Թող հայտնի լինի Ձեզ, որ մենք և բոլոր եկեղեցիները չենք ընդունել, չենք ընդունում և չենք ընդունելու որևէ այլ հանգանակ կամ հավատքի սահմանում բացի այն Սուրբ հանգանակից, որն ստորագրվել է Նիկեայի 318 և հաստատվել Կ. Պոլսի 150 երջանկահիշատակ հայրերի կողմից, որին հետևում էին նաև Եփեսոսում հավաքված սուրբ հայրերը՝ Նեստորին և նրա համախոհներին տապալելու համար: Նեստորին, Եվտիքեսին, ինչպես նաև նրանց նման դատող մարդկանց մենք բանադրում ենք, հիմք ընդունելով այն 12 նզովքները, որոնք տրված են երջանկահիշատակ Կյուրեղ Ալեքսանդրացու կողմից»[4]:

«Հենոտիկոնն», այսպիսով, անհրաժեշտ է իր հավատարմությունը քրիստոնեության առաջին տիեզերական ժողովների ուղղադավանությանը: Դա հիմք է տալիս վստահորեն պնդել, որ այն ուղղված էր քրիստոսաբանական վիճաբանությունների ծայրահեղ երկու դրսևորումների՝ նեստորականության և եվտիքեականության դեմ, և ակնհայտորեն ցույց է տալիս իր հավատարմությունը հերձվածող այդ ուղղությունների դեմ հանդես եկած ուղղադավան քրիստոսաբանության նկատմամբ: Այդ տեսանկյունից միանգամայն օրինաչափ

---

[4] Այդ մասին կաթոլիկյան աստվածաբան աբբա Դուշենը գրում է. «Նա դատապարտում է Եվտիքեսին և ընդունում Ս. Կյուրեղի 12 նզովքները: Նա հայտարարում է, որ Մարիամն Աստծո մայրն է, որ Աստծո Որդին մարդացավ, և Նա մեկ է և ոչ երկու, չկան երկու Որդիներ, և որ Երրորդության միայն մեկ անձը մարմնավորվեց: Եթե մեկն այլ կերպ կարծի, կբանադրվի. Մեկ կամ երկու բնությունների մասին չի հիշատակում: Բացարձակ հեղինակություն է համարում Կյուրեղի վարդապետությունը, ինչպես նաև նրա 12 նզովքների բանաձևումը: Հենոտիկոնը չէր կարող որևէ առարկություն բարձրացնել ուղղափառության կողմից»: Տե՛ս **Abbe Duchesne.** The Early history of the Church. v. 3, p.348. Ըստ էության համանուն դիրքերից են հանդես գալիս նաև ազդեցիկ այլ հեղինակներ: Տե՛ս **Kelli J. N. D.** Early cristian creeds, p. 123; **Encyclopedia of religion and ethics** (ed. by James Hastings). V. 1, New - York, 1961. p. 234, v. 8, New - York, 1964, p. 431.

պետք է համարել և այն, որ «Հեռոտիկոնն» ընդգծված բացասական վերաբերմունք որդեգրեց երկաբնակության բոլոր տարատեսակների, այդ թվում և քաղկեդոնական հավատքի նկատմամբ: Եվ քանի որ դավանագիրը միարարական նպատակ էր հետապնդում, նրանում թվարկվում էին ուղղադավան այն ելակետերը, որոնք ընդունելի էին բոլոր եկեղեցիների համար: Դրանով էլ պետք է բացատրել այն իրողությունը, որ «Հեռոտիկոնում», երկբնակության վարդապետությունը արմատապես մերժվում է առանց «Քաղկեդոն» անունը տալու: «Դավանում ենք նույնպես, - հռչակում է «Հեռոտիկոնը», - որ Աստծու միածին Որդին իրապես մարդեղացած մեր Տեր Հիսուս Քրիստոսը նույնպես Աստված է: էակից Հորը աստվածությամբ և էակից մարդուն իր մարդեղությամբ, որը մարմին է առել Սուրբ Կույս Մարիամ Աստվածածնից և միասնական է, այլ ոչ թե երկու: Այդ միասնականին մենք վերագրում ենք հրաշքներ և տառապանքներ, որոնք նա կրեց մարմնով, իսկ տարանջատվածներին (Հիսուս Քրիստոսի երկու բնությունները Լ. Ք.) առհասարակ չենք ընդունում, քանի որ Աստվածածնի կողմից անապական կերպով անձնավորվելով, Որդու վրա ոչ մի նոր բան չի ավելացրել: Այժմ կամ երբևիցէ, Քաղկեդոնում կամ այլ ժողովում այլ կերպ մտածող ցանկացած մեկին բանադրում ենք»[5]:

---

[5] Մեր համոզմամբ, «Հեռոտիկոնի» մասին առավել ամբողջական պատկերացում է հաղորդում հակաքաղկեդոնական եկեղեցական մատենագրությունը: Մասնավորապես, «Կնիք Հավատո»-ն հայտնում է. «Յաղագս այսորիկ ծանուցեալ ձեզ փութացաք, զի ամենայն ուրեք ուղղափառ եւ սուրբ եկեղեցւոյ միաւորութիւն եղիցի, եւ այլ հաւատ, կամ ուսումն, կամ սահման հաւատոյ կամ հաւատ, քան զասացեալսն յառաջագոյն ի սուրբ հարցն ՅԺԸ իցն, զոր հաստատեցին եւ ՃԾ սուրբ հարքն ժողովեալք ի Կոստանդնուպօլիս, ոչ ունեաք եւ ոչ ունիմք, եւ ոչ կալցուք եւ ոչ թե ունիցի ոք գիտեմք. եւ որ ունիցի ոք օտար գնա ի մէնք համարիմք, եւ այսու միայն քաջալերիմք: Յառաջագոյն ասացաք եւ այսու համարիմք կենդանի պահել զմեր թագաւորութիւնս եւ միաբան զամենայն ժողովուրդս, որ փրկական մկրտութեանն արժանի եղեն զմի եւ զնոյն ընկալեալ, նովին լուսավորեալ, զորոյ եւ զհետ չդգան ամենայն սուրբ հարքն, մանաւանդ որ յԵփեսոս ժողովեցան, որք լուծին եւ ի քաց մերժեցին զանօրէնն Նստոր եւ որք յետ նորայն զնորայն խորհէին եւ ունէին: Զոր եւ մեք զնեստորիոս միանգամայն հակառանսիրի մը տածել, եւ որք զնորայն խորհին եւ մտաբերեն նզովեմք, ընկալեալք զԲԺ. գլուխն, զասացեալսն յաստուածասիրէն Կիւրղէ, այն որ եղեւ գլուխ եպիսկոպոսացն եւ սրբոյ եկեղեցւոյն Աղեքսանդրեայ»:

«Քանզի հաւատամք, եթե Միածինն Որդի Աստուծոյ Աստուած էր ճշմարտութեամբ այն, որ մարմնացաւ, Տէր մեր Յիսուս Քրիստոս. այն, որ ի բնութենէ Հօր յաստուածութեանն իւրում, եւ ի բնութենէ մերմէ եղեւ մարդկութիւնն իւր. այն, որ էջն եւ մարմնացաւ ի Հոգւոյն Սրբոյ եւ ի Կուսէն Մարիամայ Աստուածածնէն: Քանզի մի է Որդի, եւ ոչ երկու խոստովանիմք, զի մի է Միածին Որդին Աստուծոյ, եւ նորա են սքանչելագործութիւնքն եւ չարչարանքն, զոր կամաւորութեամբ կրեաց մարմնով իւրով: Այլ գայլենսիկ, որ բաժանենն եւ փոփոխելի ասեն կամ այլայլելի զայնպիսիսն ոչ ընդունիմք. քանզի ճշմարիտ մարմնաւորութիւնն անապական եւ առանց մեղաց, որ յԱստուածածնէն եղեւ, յաւելուած Որդւոյ ոչ արար. այլ Երրորդութիւնն Երրորդութիւն մինչ կամեցաւն եւ մարդացաւ մի յԵրրորդութենէն, Բանն Աստուած»: Ի թղթոյն Զենոնի

Այսպիսով, «Հենոտիկոնում» թեև ուղղակի ոչինչ չի ասվում երկու բնությունների մասին, բայց շեշտադրվում է, որ «Հիսուս Քրիստոսն էակից է ինչպես Հայր Աստծուն աստվածությամբ, այնպես էլ մարդկանց մարեղությամբ»: Դրանով կայսերական դավանագիրը լիովին համընկնում է քրիստոնեության առաջին երեք տիեզերական ժողովների դավանաբանական որոշումների վրա խարսխված արևելյան հակաքաղկեդոնական քրիստոսաբանությանը, և այդ իսկ պատճառով էլ այն բացահայտ կերպով կանոնական է համարում Կյուրեղ Ալեքսանդրացու աստվածաբանական դիրքորոշումը ուղղղավան ճանաչելով աստվածաբանի կողմից Նեստորին ուղղված 12 հայտնի նզովքները: Հավանաբար պատճառն այդ է, որ եկեղեցու պատմությամբ և աստվածաբանությամբ զբաղվող բազմաթիվ հետազոտողներ, այդ թվում բողոքականներ Գիզելերը և Նեանդերը, ուղղափառ Պապարիկուպոլոն ես ընդունում են, որ «Հենոտիկոնը» իր էությամբ ուղղղավան փաստաթուղթ է:

Ավելացնենք նաև, որ իր բովանդակային միտումներով «Հենոտիկոնն» ընդգծված հակաքաղկեդոնական ուղղվածություն ունի: Ճիշտ է, ինչպես արևմտյան, այնպես էլ արևելյան աստվածաբանների ու եկեղեցագետների մի զգալի հատվածը փորձում է մերժել այդ, սակայն նման մոտեցումը զուրկ է ինչպես հավատքային, այնպես էլ պատմական հիմնավորումից: Ճիշտ է, «Հենոտիկոնը» բառացի կերպով չի մերժում քաղկեդոնական հավատքը, սակայն հարցի նկատմամբ անկախական մոտեցումը թույլ է տալիս հիմնավոր կերպով բխեցնել ակնհայտ այդ ուղղվածությունը: Նախ, «Հենոտիկոնը» կանոնական է համարում միայն առաջին երեք (Նիկեայի 325 թ., Կ. Պոլսի 381 թ. և Եփեսոսի 431 թ.) տիեզերական ժողովների դավանաբանական որոշումները: Եվ, քանի որ Քաղկեդոնի ժողովը դուրս է դրված կանոնական համարվող շարքից, ակնհայտ է, որ Քաղկեդոնի ժողովի կողմից հաստատված Հավատքի սահմանումը դուրս է դնում ուղղադավան հավատքի սահմաններից: «Հենոտիկոնի» հակաքաղկեդոնական բովանդակության փաստն է վկայում և այն, որ Զենոն և ապա Անաստասիոս կայսրերի կողմից միարարական

բարեպաշտ եւ ուղղափառ թագաւորի, որ կոչի Հենատիկոն, այսինքն միաւորիչ, որ է յետ Լ ամի Քաղկեդոնի ժողովոյն:

«Արդ, գիտացէ՛ք այսուհետեւ, զի ոչ սուրբ եկեղեցիք, որ են յամենայն կողմանս, եւ ոչ այնք, որ պաշտեն զնոսա աստուածասէր քահանայք եւ թագաւորութիւնս մեր, այլ հաւատ կամ այլ սահման հաւատոյ, բայց այն, որ վերագոյն ասացաւ, ոչ ընկալաք եւ ոչ ընդունիմք: Այսուհետեւ եկայք ամենեքեան անխտրութեամբ ի միաբանութիւն հաւատոյ: Այլ զայդ ամենայն, զոր գրեցաքդ առ ձեզ, ոչ եթե այնք որ զհաւատ նորոգեմք, այլ որպէս զայսոսիկ, որ խնդրուածս մատուցանեմք: Բայց զայնոսիկ, որ այլ ինչ խորհեցան եւ կամ խորհիցին այժմ եւ կամ երբ եւ իցէ, կամ ի Քաղկեդոնի, եւ կամ յոր եւ իցէ յայլ ժողով զնոսա նզովեմք, մանաւանդ զայնոսիկ, որ կոչեցան Նեստորիանոսք եւ Եվտիքոսք, եւ որք զնոցայն խորհեցան կամ խորհին»: Տե՛ս Կնիք Հաւատոյ, էջմիածին, 1914, էջ 126:

քաղաքականության հիմքում դրվեց Քաղկեդոնի հետևանքով հրապարակ իջած ներեկեղեցական պառակտումը հաղթահարելու հրամայականը:

Այդ ամենն էլ հիմք են տալիս վստահորեն պնդել, որ իր հակաքաղկեդոնական ուղղվածությամբ «Հենոտիկոնը» հանդես եկավ իբրև 451 թ. եկեղեցական-դավանաբանական պառակտումը հաղթահարելու ամենաարմատական քայլերից մեկը: Սնում էր կյանքի կոչել տրամաբանական հաջորդ քայլը կարողանալ դավանագրի շուրջ միավորել պառակտված եկեղեցու տարբեր հոսանքներին: Ինչպես ժամանակի մատենագիրները, այնպես էլ հետագա հետազոտողները միահամուռ են այն հարցում, որ արևելյան եկեղեցիների եպիսկոպոսական դասի բացարձակ մեծամասնությունն ընդունելի էր համարում «Հենոտիկոնը» և պատրաստ էր միաբանվել նրա շուրջ: Բայց ինչպես բազմաթիվ այլ հարցերում, այս պարագայում ևս քաղկեդոնական տեսաբանների մոտեցումն աչքի է ընկնում ընդգծված կանխակալությամբ: Այսպես, Ռ. Ուոլքերը համարում է, որ միարարական այդ քաղաքականությունը «...ազդեցիկ հաջողությունների հասավ Արևելքում, կայսերական ուղղադավանության պաշտոնական նորմ մնալով նաև Անաստասիոս կայսեր (491-518) օրոք: Բայց «Հենոտիկոնն», ի վերջո, ձախողվեց իր նպատակներում: Ավելի ուշ այն դատապարտվեց և դրա հետ միաժամանակ դատապարտվեցին նաև Կ. Պոլսի հաջորդող այն պատրիարքները, որոնք պաշտպանում էին այն»[6]:

Ավելի քան ակնհայտ է, որ քաղկեդոնականության այս ջատագովը փորձում է քրիստոնեական արևելքում «Հենոտիկոնի» արմատավորումը և դրա հետ կապված իրադարձությունների ծավալումն արժևորել իբրև «կայսերական ուղղադավանության պաշտոնական նորմ», այլ կերպ ասած նա համարում է, որ «Հենոտիկոնն» արմատավորվել է հարկադրաբար: Բայց այդ մոտեցումը, պատմականորեն, միանգամայն անհիմն է: Բանն այն է, որ հակաքաղկեդոնականության հենքի վրա միավորման միտումներն ամենևին էլ չամփոփվեցին Բյուզդական կայսրության սահմաններում: Հակառակը, Բյուզանդական եկեղեցու շրջանակներից դուրս գալով «Հենոտիկոնը» համաքրիստոնեական բովանդակություն և նշանակություն ձեռք բերեց: Իսկ ինչ վերաբերում է քաղկեդոնական հավատքին, ապա այն իրապես արմատավորվեց հարկադրանքով, որի պատճառով էլ Արևելյան եկեղեցիները պառակտվեցին ոչ միայն դավանաբանական, այլ նաև կանոնական առումներով: Արժեքային այդ մոտեցումը պատմականորեն լիովին անընդունելի է նաև այն պարզ պատճառով, որ առանց բացառության արևելյան բոլոր պատրիարքությունները (Ալեքսանդրիա, Երուսաղեմ, Կ. Պոլիս և, մասամբ, Անտիոք) «Հենոտիկոնի»

---

[6] **A history of the Christian Church** (ed. by Wilsston Walker), p. 176.

նկատմամբ բացահայտ դրական վերաբերմունք դրսևորեցին: Իսկ դա նշանակում է, որ նվիրապետական այդ կենտրոնների համար Զենոն կայսեր դավանագիրը ոչ թե «պաշտոնական նորմ» էր, այլ ուղղադավանության և հերձվածության միջև ընտրություն կատարելու հնարավորություն: Այդ կապակցությամբ հարկ ենք համարում մատնանշել և այն, որ V դարավերջին և VI դարասկզբին «համաձայնության դավանագիրը» դարձել էր յուրահատուկ հավատքային բարոմետր, որը ցույց էր տալիս, թե քրիստոնեական նվիրապետական կենտրոնները ինչպիսի վերաբերմունք էին որդեգրել ավանդական ուղղադավանության և քաղկեդոնական նորարարության փոխհարաբերության նկարմամբ: Իսկ այն փաստը, որ «Հենոտիկոնի» ուղղադավանությունը մերժվեց միայն Հռոմեական պատրիարքության կողմից, մեր կարծիքով, մեկ անգամ ևս վկայում է այն մասին, որ նվիրապետական այդ կենտրոնը անհողդողդ կանգնած էր «նեստորականության կոսմետիկ վերարտադրության» Լևոնի «Տոմարի» պաշտպանության դիրքերում:

«Հենոտիկոնի» հրապարակումը և նրա շուրջ ծավալված հրադարձությունները բացահայտեցին դավանաբանական վիճաբանություններին բնորոշ օրինաչափություններից ևս մեկը, այն որ հասարակական և պատմական այլ երևույթների նման դավանաբանական ուսմունքները ևս անցնում են զարգացման հաջորդական փուլեր: Այդ տեսանկյունից «Հենոտիկոնին» առնչվող համալիր հարցերից հաջորդը կապված է վերջինիս ծավալման (արմատավորման) հետ: Վավերագրերը վկայում են, որ հակաքաղկեդոնական դավանագրի հրապարակումից կարճ ժամանակ անց Ալեքսանդրիայի պատրիարք Պետրոս Մոնգը ճանաչեց «Հենոտիկոնի» ուղղադավանությունը: Նույն շարժառիթներով ալեքսանդրացիներին միացավ նաև Երուսաղեմի Մարտիրոս պատրիարքը, որը ևս հրաժարվեց քաղկեդոնական հավատքից: «Հենոտիկոնի» ընդունման հարցում յուրահատուկ հավասարակշռող քաղաքականություն որդեգրեց Անտիոքի պատրիարքությունը: Քաղկեդոնականության մոլի ջատագով Կալանդիոն պատրիաքը ոչ միայն մերժեց ընդունել նոր դավանագիրը, այլև, միավորվելով հակակայսերական ընդդիմադիր ռազմաքաղաքական ուժերին, անհաջող պալատական հեղաշրջման դավակից դարձավ: Դրանից հետո նա վտարվեց նվիրապետական աթոռից և արտաքսվեց: Կյուրեղյան քրիստոսաբանության ջատագով Անտիոքի նոր պատրիարք Պետրոս Գնաֆեսի օրոք նվիրապետական այդ կենտրոնը ոչ միայն ճանաչեց «Հենոտիկոնը», այլև եկեղեցու ժամակարգության մեջ ներմուծեց Քաղկեդոնի դավանանքին հակադիր Նիկեական Հանգանակի ընթերցանությունը:

Այն, որ «Հենոտիկոնի» հրապարակումից հետո քրիստոնեական Արևելքում նկատվում էր քաղկեդոնականությունը մերժելու շարունակական միտում,

ընդունում են նաև քաղկեդոնական աստվածաբանները: Այդ տեսանկյունից հետաքրքրական է Պ. Մեյենդորֆի այն տեսակետը, թե Հենոտիկոնի հրապարակումից հետո ներեկեղեցական հարաբերություններում տիրապետում էր միանգամայն նոր իրավիճակ: Հեղինակն այդ իրավիճակը բնութագրում է հետևյալ կերպ. «... այդ օրերին Քաղկեդոնի ժողովը բազմաթիվ եկեղեցիներում բացահայտորեն չէր ընդունվում, թեև բոլորի կողմից չէր էլ մերժվում, յուրաքանչյուր եպիսկոպոս գործում էր իր հավատքային համոզմունքների համաձայն»[7]: Իհարկե, անհնարին է պատկերացնել, որ պատրիարքական և նվիրակետական այլ կենտրոնների առկայության դեպքում յուրաքանչյուր եպիսկոպոս կարող էր գործել «իր հավատքային համոզմունքների համաձայն», սակայն կասկածից վեր է, որ «Հենոտիկոնը» ոչ բոլորի կողմից էր ընկալվում իբրև ուղղադավան փաստաթուղթ: Իսկ դա մեկ անգամ ևս վկայում է այն մասին, որ «Հենոտիկոնն» ունեցել է պատմականորեն բարդ և հակասական ընթացք: Այս համատեքստում ընդունելի պետք է համարել նաև հեղինակի այն պնդումը, թե «Հենոտիկոնի» շուրջ ծավալված իրադարձությունների ընթացքը կարող էր դրական վախճան խոստանալ միայն մի դեպքում, եթե նրա հենքի վրա ձևավորված «... իրական համաձայնությունը շաղկապվեր քրիստոսաբանության էության և եկեղեցական ավանդության հաստատուն մեկնության վրա»: Ինչ վերաբերում է հեղինակի այն պնդմանը, թե «Հենոտիկոնի իրավակարգը, որը պաշտպանում էին Զենոն և Անաստասիոս կայսրերը, վերելք ապրեց», և «Կ. Պոլսի եկեղեցին Ակակիոսի և նրա հաջորդների օրոք բազում տասնամյակներ գործնականում դարձավ արևելյան միակ կենտրոնը, որը պաշտպանում էր այդ միտումը»[8], ապա այն լիովին անհարիր է ճշմարտությանը, հետևաբար անընդունելի է գիտության կողմից:

Այդ առնչությամբ մեկ անգամ ևս հարկ ենք համարում մատնանշել, որ «Հենոտիկոնի» արմատավորումն Արևելյան քրիստոնեությանը (թե քաղկեդոնական և թե հակաքաղկեդոնական) չի պարտադրվել, այսինքն դավանագիրն ընդունելու հարցում ազատ ընտրության իրավունք է վերապահվել բոլորին: Դրանով է պայմանավորված է քննարկվող հիմնահարցի բնորոշ, գուցե, ամենաարմատական գծերից մեկը, այն, որ եկեղեցական միության դեմ

---

[7] **Meyendorff P.** Imperial unity and christian divisions. p. 201.

[8] **Meyendorff P.** Imperial unity and christian divisions. p. 201. Այդ մասին գրեթե նույնական մոտեցում են ցուցաբերում Արևելյան և Արևմտյան քաղկեդոնական եկեղեցու բազմաթիվ ներկայացուցիչներ: Տես **Поснов М. Э.** История христианской Церкви (до разделения Церквей - 1054 г.), с. 399, **Болотов В. В.** Лекции по истории древней Церкви. Т. 4, с. 207-209; **Карташев А. В.** Вселенские соборы, с. 259; **Abbe Duchesne.** The Early history of the Church, v. 3, p. 348; **Kelli J. N. D.** Early cristian creeds, p. 123; **Encyclopedia of religion and ethics** (ed. by James Hastings), v. 2, p. 644 և այլն:

ուղղված ծայրահեղ մոտեցումները հավասարապես վերագրելի են թե քաղկեդոնական և թե հակաքաղկեդոնական հոսանքներին: Ընդ որում, հատկանշական է անժխտելի մեկ այլ փաստ ևս: Ինչպես վկայում են վավերագրերը, «Հենոտիկոնի» դեմ գործող ամենաազդեցիկ ուժը դարձան ոչ թե քաղկեդոնական, այլ հակաքաղկեդոնական արմատական ուղղությունները: Եվգարիոս պատմիչը հայտնում է, որ ինչպես Եգիպտոսի, այնպես էլ Ասորիքի ու Երուսաղեմի հակաքաղկեդոնական հոգևորականների մի ստվար հատվածը «Հենոտիկոնը» ընդունելի չէր համարում այն պատճառաբանությամբ, թե դա «լիարժեք դավանաբանական փաստաթուղթ չէ»: Ընդ որում, հակաքաղկեդոնական հոսանքի դավանաբանական արմատական այդ դիրքորոշումը խարսխված էր այն համոզմունքի վրա, թե «Հենոտիկոնը» արմատապես չի հակադրվում քաղկեդոնական «երկու բնության» սահմանմանը[9]:

Կասկածից վեր է, որ եկեղեցու ներքին կյանքում տեղ գտած ծայրահեղ այդ կողմնորոշումները չէին կարող նպաստել վիճաբանական հարցի լուծման գործին: Իրադարձությունների նմանատիպ ծավալման ընթացքի քննական արժևորումը թույլ է տալիս փաստարկված կերպով մերժել քաղկեդոնական աստվածաբանության և եկեղեցագիտության այն պնդումը, թե, իբր, «Հենոտիկոնի» մերժումը և «ուղղադավանության պաշտպանությունը» տեղի է ունեցել քաղկեդոնականների պայքարի շնորհիվ: Փաստերը թույլ են տալիս վստահորեն պնդել, որ «Հենոտիկոնի» դեմ ուղղված հակաքաղկեդոնական ընդդիմության արմատական - մերժողական դիրքորոշումը ոչ միայն պատճառ դարձավ «Հենոտիկոնի» հետևանքով ծնավորված «դավանաբանական փխրուն համերաշխությունն» ի չիք դարձնելուն, այլև քաղկեդոնականների ձեռքին գենք հանդիսացավ ընդդեմ «Հենոտիկոնի»: Այդ հենքի վրա ծնավորված տարաձայնությունները չէին կարող անվերջ շարունակվել և մեծապես նպաստեցին միջեկեղեցական լարվածության ուժգնացմանը: Նշված միտումներն էլ ավելի ցայտուն տեսք ստացան Հռոմի աթոռի միջամտության հետևանքով, որը մեր համոզմամբ «սեփական բացառիկության հիվանդոտ հավակնությամբ» քաղկեդոնականության պահպանումը սերտորեն շաղկապում էր «Լևոնի Տոմարը փրկելու» մոլուցքի հետ:

---

[9] Մանրամասները տես Евагрий Схоластик. Церковная История. СПб, 1999, с. 101-110. Այս հարցում Եվգարիոսին ուղղակի կրկնում են նաև երկրնակ բազմաթիվ հերինակներ: Տես Поснов М. Э. История христианской Церкви (до разделения Церквей - 1054 г.), с. 340; Болотов В. В. Лекции по истории древней Церкви. Т. 4, с. 212; Карташев А. В. Вселенские соборы, с. 305-308; **Abbe Duchesne.** The Early history of the Church, v. 3, p. 351; **Kelli J. N. D.** Early cristian creeds, p. 124 և այլն:

Այդ տեսակետից հատկանշական է հատկապես Հռոմի Ֆելիքս Բ պապի գործունեությունը: Հանիրավի անտեսելով միություն հաստատելու գործում Արևելյան նվիրապետական կենտրոնների դիրքորոշումը, նա ոչ միայն մերժեց ճանաչել «Հենոտիկոնի» ուղղադավանությունը, այլև նգովեց դավանագրի հեղինակ համարվող Կ. Պոլսի Ակակիոս պատրիարքին[10]: Պապի որդեգրած այդ քաղաքականության հետևանքով արևելյան և արևմտյան եկեղեցիների միջև հիմք դրվեց 35-ամյա հակամարտության, որը դրսևորվեց ոչ միայն հոգևոր-դավանաբանական, այլև քաղաքական հարաբերությունների ոլորտում:

«Հենոտիկոնի» շուրջ ծավալվող իրադարձություններն է լ ավելի անհաշտ տեսք ստացան Զենոն կայսեր մահվանից հետո: Ճիշտ է, նրան հաջորդող Անաստասիոս կայսրը նույնպես համակրանքով էր վերաբերվում հակաքաղկեդոնական ուղղադավանությանը և ձգտում էր նրա աջակցությամբ լուծել եկեղեցու համար այնքան կենսական միասնացման հարցը, սակայն նրա կրոնական քաղաքականությանը դեմ դուրս եկավ Կ. Պոլսի Մակեդոնիոս պատրիարքը: Վավերագրերը վկայում են, որ աստվածաբանական ճակատում չկարողանալով դիմադարձ կանգնել «Հենոտիկոնին» Կ. Պոլսի պատրիարքը փորձ կատարեց դրան հակադրվել քաղաքական դաշտում, որի պատճառով քննարկվող հիմնահարցի շուրջ արքունիքի և Մակեդոնիոսի հակասությունը հասավ իր գագաթնակետին: Եվ, երբ անհաջող դավադրությունից հետո պատրիարքը վավերական ճանաչեց «Հենոտիկոնը», կարճ ժամանակ անց կրկին անցավ ընդդիմադիրների շարքը, որի պատճառով էլ արտաքսվեց Անատոլիա[11]:

Ինչպես միարարական նախորդ դավանագրի Բասիլիկոս կայսեր «Էնկիկլիոնի» պարագայում, Զենոն կայսեր «Հենոտիկոնի» հետագա ճակատագրի համար ևս բախտորոշ նշանակություն ունեցան ոչ թե հոգևոր, այլ քաղաքական իրադարձությունները: Բյուզանդական դանուբյան զորքերի հրամանատար Վիտալիանոսի գլխավորությամբ խռովություն բարձրացվեց և

---

[10] Կաթոլիկ եկեղեցու արմատական այդ դիրքորոշման մասին Ֆ. Շաֆֆը գրում է. «Հռոմի եպիսկոպոս Ֆելիքս Բ մերժեց Հենոտիկոնը և արևելքի հետ միությունը»: Նա հանգամանորեն անդրադառնում է այդ հարցի «ներքին միտումների» նկարագրությանը և ցույց տալիս, որ նման մոտեցման հիմքում ընկած էր «պապականության առաջնության» կեղծ պատկերացումը: Տե՛ս **Philip Schaff.** History of the Christian Church, v. 3, p. 765.

[11] Տե՛ս Поснов М. Э. История христианской Церкви (до разделения Церквей - 1054 г.), с. 340; Болотов В. В. Лекции по истории древней Церкви. Т. 4, с. 312; Карташев А. В. Вселенские соборы, с. 305-308; **Abbe Duchesne.** The Early history of the Church, v. 3, p. 362; **Kelli J. N. D.** Early cristian creeds, p. 123; **Encyclopedia of religion and ethics** (ed. by James Hastings), v. 1, p. 644.

ապստամբները կայսերական իշխանությունից ու Կ. Պոլսի պատրիարքությունից պահանջեցին վերականգնել հարաբերությունները Հռոմի աթոռի հետ: Տուրք տալով ռազմական ուժի հարկադրանքին Անաստասիոս կայսրը հարկադրված էր բավարարել նրանց պահանջը և, որքան էլ հավատքային առումով ծանր լիներ նրա համար, հաշտություն առաջարկեց Հռոմին[12]:

Իրադարձությունները կտրուկ փոխվեցին 518 թ., երբ Բյուզանդական գահը ժառանգեց մոլի քաղկեդոնական Յուստինոսը: Իր մերձավորագույն օգնական և ազգակից Յուստինիանոսի օժանդակությամբ կայսրը, բռնության և հարկադրանքների քաղաքականությունն ծավալելու միջոցով, կարողացավ ուղի հարթել քաղկեդոնականության վերջնական հաղթանակի համար: Կայսեր ջանքերով հրավիրված Կ. Պոլսի եպիսկոպոսական ժողովը «ուղղադավան» և«առաքելական ավանդույթներին հավատարիմ» հռչակեց այն հավատքը, որը շարադրված է «Ս. Պետրոսի ժառանգորդի Լևոնի Տոմարում»: Դրանից անվերապահ կերպով բխում էր նաև քաղկեդոնական հանգանակը պահպանելու հրամայականը[13]:

Այսպիսով, քաղկեդոնականության հենքի վրա պառակտված քրիստոնեական Արևելքը միավորելու «Հենոտիկոնի» ջանքերը նույնպես ապարդյուն անցան: Հոգևոր դեգերումների մեջ գտնվող քրիստոնեական պատրիարքությունները ոչ միայն չկարողացան հավուր պատշաճի գնահատել իրենց գործունեության համար լայն հեռանկարներ բացող միարարության քաղաքականությունը, այլև ի զորու չեղան անհրաժեշտ և օգտակար պտուղներ քաղել նույնիսկ քաղկեդոնական եկեղեցու համար: Այդ ամենի արդյունքում էլ ավելի խորացան և աստիճանաբար ներհակ տեսք ստացան ոչ միայն քաղկեդոնական և հակաքաղկեդոնական եկեղեցիների, այլև քրիստոնեական Արևելքի և Արևմուտքի քաղկեդոնական եկեղեցիների հարաբերությունները:

---

[12] Այդ մասին մանրամասները տես Поснов М. Э. История христианской Церкви (до разделения Церквей - 1054 г.), с. 340; Болотов В. В. Лекции по истории древней Церкви. Т. 4, с. 312; Карташев А. В. Вселенские соборы,305-308; **Abbe Duchesne.** The Early history of the Church, v. 3, p. 362; **A history of the Christian Church** (ed. by Wilsston Walker), p. 176; **Meyendorff P.** Imperial unity and christian divisions. p. 201.

[13] Մանրամասները տես Евгарий Схоластик. Церковная История. с. 134-136. Այս հարցում եվգարիոսին ուղղակի կրկնում են նաև երկբնակ բազմաթիվ հեղինակներ:Տես Поснов М. Э. История христианской Церкви (до разделения Церквей - 1054 г.), с. 342; Болотов В. В. Лекции по истории древней Церкви. Т. 4, с. 314; Карташев А. В. Вселенские соборы,305-308; **Abbe Duchesne.** The Early history of the Church, v. 3, p. 365; **A history of the Christian Church** (ed. by Wilsston Walker), p. 180; **Meyendorff P.** Imperial unity and christian divisions. p. 203 և այլն: